ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 109
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերի վարչական տարածքում գտնվող 09-051-0401-0001 և 09-074-0445-0008 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.015 հա և 0.01 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերի վարչական տարածքում գտնվող 09-051-0401-0001 և 09-074-0445-0008 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.015 հա և 0.01 հա մակերեսներով հատուկ նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մեղրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան և Շվանիձոր բնակավայրերի հաստատված գոտևորման նախագծերում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 31 » «մայիսի» 2022թ.